



Երկինքի մեջ Աստուծոյ հետ արցունք չկայ: Ատեններ Աստուծոյ մարդիկը կու լան մեծ տխրութիւններու համար, այս կեանքին ընթացքին երկինքի մեջ, Աստուած ինքը պիտի սրբէ բոլոր արցունքները:


19

Նաեւ երկինքի մեջ մահ չկայ: Աստուծոյ ժողովուրդը միշտ եւ յաւիտեան պիտի ըլլայ Տիրոջ հետ: Այլեւս վիշտ չկայ, ոչ ալ լացուկո՞ծ, ոչ ալ ցաւ: Չկայ հիւանդութիւն, ոչ ալ հրաժեշտ, ոչ ալ թաղում: Բոլորը յաւիտեան ուրախ են երկինքի մեջ Աստուծոյ հետ:




20

Ամենալաւը, երկինքը տղոց ե՛ւ աղջիկներուն (եւ չափահասներուն ալ) համար է, որոնք կը հաւատան Յիսուս Զրիստոսին իբր իրենց փրկիչ եւ իրեն կը հնազանդին իբր իրենց տերը:



21

Երկինքի մեջ գիրք մը կայ, որ գառնուկին կեանքին գիրքը կը կոչուի: Ան լեցուն է մարդոց անուններով: Գիտես որո՞ւց անունները արձանագրուած են հոն: Ամեն մարդոց, որոնք իրենց վստահութիւնը յանձնած են Յիսուսի: Զու անունդ ալ հո՞ն է:




22

Երկինքը, Աստուծոյ մտեղեցիկ բնակարանը





Սուրբ Գիրքին վերջին բառերը երկինքի մասին հրաշալի հրաւեր են: "Եւ հոգին եւ հարսը կ'ըսեն. Եկուր, եւ ան որ ալ լսէ ասիկա թող ըսէ Եկուր, եւ ով որ ալ ծարաւ կը զգայ թող գայ եւ ով որ ալ սրտագին փափագի, թող որ ձրիօրէն անէ կեանքի ջուրը":



23

Երկինքը, Աստուծոյ մտեղեցիկ բնակարանը

Աստուծոյ խօսքն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Յովհաննէս 14, 2 Կորնթացիս 5,
Յայտնութիւն 4, 21, 22

"Զու խօսքիդ մուտքը լոյս կը ցլացնէ:"
Մաղմուս 119:130

Written by Edward Hughes
Illustrated by Lazarus

Translated by Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Adapted by Sarah S.

Story 60 of 60

M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.


Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք հինգ մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեղ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի ջուր մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեզ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը ես կ'ապրի: կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ ջուր որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննէս 3:16

Հայերէն Armenian

Երբ Յիսուս ապրեցաւ երկրի վրայ Ան իր աշակերտներուն պատմեց երկինքի մասին: Ան կոչեց. "Իր օրս բնակարանը" եւ ըսաւ, որ լեցուն ուրիշ պալատներ կան հոն: Պալատը մեծ գեղեցիկ բնակարան է:



Երկինքը անէի մեծ եւ գեղեցիկ է քան որեւէ աշխարհի վրայ գտնուող բնակարան:


Յիսուս ըսաւ. "Ես կ'երթամ, որ ձեզի տեղ պատրաստեմ եւ երբ երթամ եւ ձեզի տեղ պատրաստեմ պիտի վերադառնամ, եւ ձեզի ընդունիմ իբր իմս":



1


2

Յիսուս երկինք բարձրացաւ, երբ մեռելներն յարութիւն առաւ: Երբ իր աշակերտները կը դիտէին Յիսուս վեր կը բարձրացուէր եւ մեծ ամպ մը առաւ Աստուծոյ ու ծածկեց անոնց տեսողութիւնը:




3

Այդ օրէն ի վեր, քրիստոնէաները կը յիշեն Յիսուսի խոստումը, որ Լորէն պիտի գայ, որ իրենց տանի: Յիսուս ըսաւ, որ յանկարծ կրնայ վերադառնալ, երբ մէկը իրեն չսպասէր, անակնկալ:




4

Բայց ի՞նչ կ'ըլլայ այն քրիստոնէաներուն, որ կը մահանան Յիսուսի գալէն առաջ: Սուրբ Գիրքը կ'ընէ, որ անոնք ուղղակի կ'երթան Յիսուսի հետ ըլլալու: Մարմինէն հեռու ըլլալը կը նշանակէ ըլլալ Յիսուսի հետ:




5

Յայտնութեան վերջին գիրքը Սուրբ Գիրքին, մեզի կը պատմէ, թէ ինչ հրաշալի է երկինքը: Ամենն հրաշալին այն է, որ շատ հիանալի ձեւով երկինքը Աստուծոյ քանկարանն է: Աստուած ամէն տեղ է, բայց իր գահը երկինքի մէջ է:




6

Հրէշտակները եւ ուրիշ երկնային էակներ կը պաշտեն Աստուծոյ երկինքի մէջ: Ինչպէս նաեւ Աստուծոյ բոլոր ժողովուրդը, որ մեռաւ եւ երկինք բարձրացաւ: Անոնք Աստուծոյ փառք կու տան շնորհալի երգերով:




7

Հետեւեալ բառերը մէկ երգէն են, որ կ'երգեն: Դուն արժանի ես, որ մեզի հատուցանես Աստուծոյ քու արհմովը եւ դուրս բերիր ամէն ցեղերէ եւ երկիրներէ եւ մեզի թագաւորներ եւ քահանաներ դարձուցիր մեր Աստուծոյ (Rev/ 5:9):




8

Սուրբ գիրքին վերջին էջերը կը ներկայացնեն երկինքը իբր "Նոր Երուսաղէմ": Ատիկա շատ-շատ մեծ է, երկար ցանկապատերով դուրսը: Պատը թանկարժէք քարով է, աղամանդի պէս մաքուր:




9

Ոսկեղէնները եւ թանկարժէք քարերը կը կազմեն պատին կառոյցը, կը փայլիլին գեղեցիկ գոյներով: Ամէն մէկ քաղաքի դռները շինուած են մէկական հսկայ լուլույով:



10

Այդ խոշոր լուլույով դռները երբեք չեն գոցուիր: Զալեցեղ ներս մտնենք եւ նայինք ինչեր կան... Օ՛հ, սքանչելի երկինքը նոյնիսկ անելի գեղեցիկ է ներսէն:




11

Զաղաքը ամբողջովին կառուցուած է մաքուր ոսկիով, ինչպէս յստակ եւ մաքուր ապակի: Նոյնիսկ ճամբաները ոսկիով շինուած են:




12

Գեղեցիկ, զուլալ գետի մը ջուրերը, որ կեանքի ջուրերն են կը հոսին Աստուծոյ գահէն: Գետին երկու ափերուն կան կեանքի ծառերը, որ առաջին անգամ կը գտնուին Եդէմի պարտեզին մէջ: Այս ծառը շատ յատուկ է: Ան կը կրէ տասներկու տեսակ տարբեր տեսակի պտուղներ, ամէն ամիս տարբեր տեսակ: Կեանքի ծառերուն տերեւները առողջութիւն եւ հանգստութիւն կու տան երկիրներուն:




13

Երկինքը պէտք չունի արեւուն կամ լուսնին, որ լուսատուրի, Աստուծոյ ինքնին շնորհքը կը լեցնէ հրաշալի լոյսով: Հոն երբեք գիշեր չկայ:




14

Երկինքի մէջ նոյնիսկ անասունները տարբեր են: Բոլորն ալ ընտելացած եւ ընկերային են: Գայլերը եւ գառնուկները միասին նոյն խոտէն կ'ուտեն: Նոյնիսկ հզօր առիւծները յարգ կ'ուտեն, ինչպէս եզերը: Տերը կ'ընէ. "Իմ սուրբ լեռան վրայ անոնք ոչ քանդուում ոչ ալ վնաս պիտի ընեն":




15

Երբ շուրջերեսի նայինք կը նկատենք, որ կարգ մը բաներ պակաս են երկինքի մէջ: Հոն չենք լսեր որեւէ մէկ բարկութիւն կամ անախորժ բառ:




16

Որեւէ մէկը միսին հետ չի կուրիր կամ անձնասիրութիւն է՛րներ:



17

Դռները կրպաններ չունին, որովհետեւ երկինքի մէջ գողեր չկան: Ստախօսներ չկան, ոճրագործներ, կախարհներ, կամ ուրիշ չար մարդիկ չկան: Չկայ որեւէ տեսակի մեղք երկինքի մէջ:



18